



Պարխա ինքնինքը իր նախասիրած գեղարուեստի պատմութեան նուիրելու: Այս ժամանակաշրջանէս են իր արժէքաւոր գրութիւնները:

1942ին զինքը կը գտնենք դարձեալ իր ծննդավայրը. հոս է որ երկու տարի վերջ մեր Ազգին պատուարեր գիտունը սլտի դարէն արտադրել:

Սագրղեան որչափ ասինքն եւ համեմատնաւորութիւն մը, նոյնչափ անխոնջ աշխատակէր եւ խուզարկող գիտնական մըն էր: Աննկուն աշխատասիրութեան եւ պրպտումներու արդիւնք են իր հմտալից երկասիրութիւնները:

Ամբողջ կեանքին ընթացքին, Սագրղեան աշխատած է մանրակրկիտ քննութիւններով եւ լուսարանութիւններով փաստել՝ թէ հայ արուեստագէտները ո՛չ միայն ճարտարապետական եւ գեղարուեստական, այլ նաեւ՝ դարդարչական դանադան մարդերու մէջ արդիւնաւոր եղած են: Բարձրահմուտ հեղինակը հայ եւ օտար գեղարուեստագէտներու տուարներուն վրայ յեցած՝ իր նիւթին շուրջ կը խօսի ճիշտութեամբ: Հայ արժէքները օտարագրի գիտնականներու ծանօթացնելու գիտումով է որ ան գրած է ընդհանրապէս գաղղիերէն լեզուով, եւ իր յօդուածները հրատարակած միջազգային պարբերագիրներու մէջ: Օտար մեծանուն արուեստագէտներէ Սագրղեան դնահատուած է որպէս փորձ եւ անաչառ մասնագէտ, որ գիտէ հայ գարդանկարչութեան ինքնատուութիւնը երեւան հանել: Իր ամէն գրութիւններուն ընթացքին — անոնց մէջ անգամ, որոնք պարսիկ եւ թուրք գեղարուեստը ունին իրենց նիւթ — կը ջանայ հայ արուեստը եւ արուեստաւորը պանծացնել: Բարձրաթիւ են իր յօդուածները:

Առանձին հատորով հրատարակութիւններուն մէջէն լուսագոյնն եւ Հայերուս աւելի շահաբերական է իր՝

1. Pages d'Art Arménien: Enluminure — Tapis — Tissus royaux — Sculpture sur bois — Orfèvrerie — Faïences — Iconographie. (Էջեր Հայկ. գեղարուեստի. Լուսագարգութիւն — Գորգեր — Արքայական հիւտուածք — Փայտարանդակ — Ոսկերչութիւն — Յարձակակիներ — Պատկերագրութիւն:) Paris, 1940. էջ 137 + 16 + XLV. Publications de l'Union Générale Arménienne de Bienfaisance. Fonds Melkonian. (Հրատ. Հ. Բ. Լ. Միութեան Մեկրոնեան ֆոնտին:)

Հեղինակը գեղեցիկ գաղափարն ունեցած է, տանեակ մը պարբերաթերթերու մէջ լոյս տեսած հայկ. արուեստի հայող իր յօդուածները, վերաքննութեամբ ներկայ հատորի մէջ ամփոփելու:

Նոր է երկրորդ գլուխը, ուր կը խօսուի Հեթում Ա.ի Կիլիկիոյ թագաւորին երրորդ Պարոն վասակի մանրանկարի մը մասին (Un portrait du Baron Vassag, frère du roi Hétoum I<sup>er</sup> de Cilicie): Մտտեանս կը բովանտակը հետեւեալ գլուխները՝

- I. L'enluminure de l'évangile de 1274 au nom du maréchal Auchine. էջ 9—16. (Հմտ. Մարաշախա Աւշինի անունով 1274ին գրուած հայերէն Աւետարանին լուսագարգութիւնը: Անահիտ, է (1936), թ. 1—3, էջ 6—13: Եւ Rev. de l'Art 68 [1935], էջ 115—124:)
- II. Un portrait du baron Vassag, frère du roi Hétoum I<sup>er</sup> de Cilicie. էջ 17—22:
- III. Les tapis arméniens depuis le Moyen Age jusqu'à nos jours. էջ 23—38 (Հայկ. գորգերը միջին դարէն սկսեալ մինչեւ մեր օրերը:)
- IV. Tissus royaux arméniens des X<sup>e</sup>, XI<sup>e</sup> et XIII<sup>e</sup> siècles. էջ 41—45. (Թագաւորական հայկ. հիւտուածքներ Ժ., ԺԱ. եւ ԺԳ. դարերէն: Հմտ. Syria 16 (1935), էջ 291—296:)
- V. Les broderies et dentelles arméniennes du couvent de Saint-Lazare de Venise. էջ 47—50. (Հմտ. Ս. Ղազարի վանքին ասղնեգործ կտորերն եւ ժանեակները. Բզմ. ՂԳ [1935], թ. 2—3, էջ 75—78:)
- VI. Une porte en bois sculptée arménienne de 1134. էջ 51—58. (Քանդակուած փայտեայ հայկ. դուռ մը 1134էն: Հմտ. Artibus Asiae 4 [1936], էջ 221—229:)
- VII. Thèmes et motifs d'enluminure et de décoration arméniennes et musulmanes. էջ 59—86. (Հայ եւ մահմեդական լուսագարգութեան եւ գարդագրութեան նիւթեր եւ շարժագծեր):
- VIII. L'Orfèvrerie arménienne à l'influence occidentale de Constantinople aux XVIII<sup>e</sup> et XIX<sup>e</sup> siècles. էջ 87—95. (Հմտ. «Կ. Պոլսոյ հայ ոսկերչութիւնը ԺԸ—ԺԹ. դար»: Անահիտ, Ա. [1929—1930], թ. 5, էջ 9—14. թ. 6, էջ 39—51: Եւ La Renaissance de l'Art français, mars 1924).
- IX. Les Manasse, une dynastie de peintres et de miniaturistes des sultans aux XVIII<sup>e</sup> et XIX<sup>e</sup> siècles. էջ 97—101 (Հմտ. «Մանասները, հայ նկարիչներու հարստութիւն մը ԺԸ—ԺԹ. դար», Ընդարձակ Տարեցոյց Ս. Փ.

- Ազգ. Հիւանդանոցի, 9 [1933], էջ 53—56:)
  - X. La question de faïences de Keutahia. էջ 103—113. (Տե՛ս նոյնին թրդմ.ը Մ. Ալէմշահէ, «Գեթթահայի յարձակակիներու հարցը». Բզմ. ՂԳ [1935], էջ 142—150:)
  - XI. A propos de deux médailles de 1673 à l'effigie d'un marchand arménien de Djoulfa, près Ispahan. էջ 115—126. (Հմտ. «Նոր Չուղայեցի վաճառականի մը անուն հայկական երկու մետալներու առթիւ»: Անահիտ, Ա. [1929], թ. 1, էջ 57—65:)
  - XII. Deux tableaux à sujets arméniens de J. B. Van Mour. էջ 127—129. (J. B. Van Mourի երկու նկարներ հայկական կեանքէ:)
  - XIII. Le théâtre de Karagheuz et Aivaz Serkis. էջ 131—136. (Քարակեօզի թէատրոնը եւ Այվազ Սարգիս:)
- Կը յաջորդեն 16իջեան յատուկ անուններու եւ նիւթերու ցուցակ մը եւ 45 տախտակներ, ուր ներկայացուցուած են 80 լուսանկարներ ձեռագիրներու, գորգերու, մանրարուեստի եւայլն, որոնց մասին խօսուած էր գրքին մարմնոյն մէջ:
- Սագրղեան, միայն իր այս հմտալից մտտեանով արդէն յաջողած է «իր աղիւսը բերել այն յուշարձանին՝ որ օր մը սլտի բարձրացուի ի պատիւ հայ գեղարուեստին» (էջ 7):
- Այժմ կ'անցնինք յիշել Հեղինակին միւս կարեւորագոյն գրութիւնները. նախ գրքերը, ապա յօդուածները:
- 2. La miniature persane du XII<sup>e</sup> au XVII<sup>e</sup> siècle. 4<sup>o</sup> մեծ. էջ 145. 191 նկարներով եւ 2 գունատիպ տախտակներով: Պարխա. Van Oest. 1929. Հոս եւս կը յայտնուի հեղինակը իրը ճաշակի տէր գեղարուեստագէտ մը, իրը հմուտ պատմաբան մը՝ որ ճշգրիտ եւ ստույգ տեղեկութիւններ կը հաղորդէ: Տե՛ս Gaston Migeonի գրախօսականը՝ Syria 10 (1929), էջ 170—171 եւ Lucien Bouvatիը՝ Jour. Asiatique 217 (1930), էջ 167—169:
  - 3. Études d'art musulman. La céramique d'Asie Mineure et de Const. du XIII<sup>e</sup> siècle au XVIII<sup>e</sup> siècle. 4<sup>o</sup>, էջ 45. 22 նկարներով. Պարխա Geuthner 1923 (նոյնը՝ Rev. de l'Art (1923) ԽԳ եւ ԽԴ. հատորներու մէջ): Gaston Migeonի հետ գրուած այս գրքին մէջ կը խօսուի Փոքր Ասիոյ խեցեգործութեան մասին: G. Conteanau գրախօսած է այս Syriaի մէջ, 5 (1924), էջ 72—73:

- 4. Un brasero de Duplessis au Vieux-Sérail de Stamboul. Gazette des Beaux-Arts (1914) էջ 89—96.
- 5. Les Tapis Arméniens, Rev. des Études Arm. 1 (1920) էջ 121—127. Նոյնը հայերէն՝ Պոլսոյ Շանք շարժաթերթի մէջ (1919) թիւ 36, եւ Նիւ Եորքի Կոչնակի (1920) Մարտ 13 եւ 20ի թիւերուն մէջ:
- 6. L'Unité des écoles de miniaturistes en Perse. Syria 2 (1920), էջ 161—165:
- 7. Les miniaturistes persans Behzad et Kassim Ali. Gazette des Beaux-Arts (1920), էջ 215—233:
- 8. L'École de miniature de Hérat au XV<sup>e</sup> siècle. La Renaissance de l'Art (1921), ապրիլ եւ յունիս:
- 9. Une école de peinture pré-mongole dans la Perse orientale. Gazette des Beaux-Arts (1923), յունուար:
- 10. A propos d'une coupe à vin en agate au nom du Sultan Husséin Baïcara. Syria 6 (1925), էջ 274—279:
- 11. La reliure turque du XV<sup>e</sup> au XIX<sup>e</sup> siècle. Revue de l'Art 51 (1926), էջ 277—284. 52 (1927), էջ 141—155; 286—298:
- 12. Les tapis à dragons et leur origine arménienne. Syria 9 (1928), էջ 238—256:
- 13. La peinture à Const. et Abdullah Boukhari. Rev. de l'Art 53 (1928), էջ 191—201: Նոյնին հայերէնը՝ Կեանք եւ Արուեստ, թ. 1931 տարեգրքին մէջ էջ 85—86 եւ էջ 273:
- 14. La miniature à l'exposition d'art persan de Burlington House. Syria 12 (1931), էջ 163—172:
- 15. L'inventaire des tapis de la mosquée Yéni-Djami de Stamboul. Syria 12 (1931), էջ 368—373:
- 16. Le miniaturiste persan Kassim Ali, à propos d'une publication anglaise. Rev. de l'Art 59 (1931), էջ 87—96:
- 17. „L'Art turc.“ Jelâl Es'ad, Կ. Պ. 1928 (թրքերէն): Սագրղեան գրախօսած է այս՝ Jour. Asiatique 218 (1931), էջ 366—372:
- 18. Հայկական գորգերը ԺԵ.էն ԺԹ. դար: Անահիտ Գ. (1932), թիւ 5—6, էջ 72—87: Նոյնը նաեւ Rev. de l'Artի մէջ 58 (1933), էջ 1—16:
- 19. ԺԹ. դարու Սուլթաններուն հայ մանրանկարիչները եւ թուրք իշխանուհիի մը մանրանկարը: Տարեցոյց Ազգ. Հիւանդանոցի Ը. (1932) էջ 144—148:
- 20. Հայոց գեղարուեստական գործունէութիւնը Իկոնիոյ եւ Կ. Պոլսոյ Սուլթաններու օրով: Անահիտ Գ. (1932—1933) թ. 3—6, էջ 21—28, Ե (1933) թ. 1—2, էջ 26—36, թ. 3—4, էջ 32—36:

- 21. La reliure persane au XV<sup>e</sup> siècle sous les Timourides. Rev. de l'Art 58 (1933), Յուլիս, 59 (1934) Դեկ.
- 22. L'exposition de miniature et d'enluminure musulmanes du Metropolitan Museum of Art de New-York. Syria 15 (1934), 276—281.
- 23. La reliure dans la Perse occidentale sous le Mongols au XIV<sup>e</sup> et au début du XV<sup>e</sup> siècle. Ars Islamica 1 (1934), vol. I, part. I.
- 24. J. Baltrusaitis, Études sur l'art médiéval en Géorgie et en Arménie. Leroux 1929, 4<sup>e</sup>, p. XV + 105 et CI planches. Գրախ. Սաղրդեանէ՛ Հանդ. Ախուրայ 48 (1934), էջ 339—343:
- 25. Les tapis de Perse à la lumière des arts du livre. Artibus Asiae 5 (1935), էջ 9—22, 222—235.
- 26. Esthétique et terminologie persanes. Jour. Asiatique 226 (1935), էջ 144—150.
- 27. Էջմիածին ժ. դարուն էվիտա Չելէ-պիէն դիտուած: Անահիտ 6 (1935), Թիւ 3—4, էջ 53—56:
- 28. Nouveaux documents sur les tapis arm. Syria 17 (1936), էջ 177—184:
- 29. Persian drawings. The Burlington Magazine 68 (1936), յուլ., օգ.:
- 30. Les questions de Kotahya et de Damas dans la céramique de Turquie. Jour. Asiatique 228 (1936), էջ 257—279:
- 31. Յիշատակներ Կ. Պոլսէն: Անահիտ 7 (1936), Թ. 5—6, էջ 10—17. 8 (1937), Թ. 1—2, էջ 33—40. Թ. 3—4, էջ 34—41:
- 32. La caricature dans les arts grahique persans. Rev. de l'Art 61 (1933), էջ 98—100:
- 33. The school of Bihzad and the miniaturists Aga Mirak and Mir Musavvir. Burlington Magazin 68 (1936), Թ. 395, էջ 81—85:
- 34. Contribution à l'Iconographie de la Turquie et de la Perse. Ars Islamica 3 (1936), մասն Ա. էջ 9—22 էւն:
- 35. La reliure persan au XV<sup>e</sup> siècle sous le Turcomans. Artibus Asiae 7 (1937), էջ 210—223:
- 36. Mahmud Mudhabib, miniaturiste, enlumineur et calligraphe. Ars Islamica 4 (1937), էջ 338—344:
- 37. Abdul Khan, seigneur kurde de Bitlis au XVII<sup>e</sup> siècle et ses trésors. Jour. Asiatique 229 (1937), էջ 253—270:
- 38. Le paysage dans la miniature persane. Syria 19 (1938), էջ 279—286:

- 39. La reliure persane sous le Séfévis aux XVI<sup>e</sup> et XVII<sup>e</sup> siècles. Artibus Asiae 8 (1938).
- 40. The portraits of Mehmed II. Burlington Magazine 71 (1939) ապր. էջ 172—181:
- 41. «Հայկական գորգեր». Անահիտ 10 (1939), Թ. 1—2, էջ 34—35: Zdenko Hofrichter, „Armenische Teppiche“ գերբը կը դրախօսէ: Նոյնը նաեւ Journal Asiatique 229, (1937) էջ 667—670:
- 42. „Manuscris Arm. illustrés des XII, XIII et XIV siècles de la Bibl. des Pères Mech. de Venise“ Սիւրարիի Տէր-Ներսէսեանի մատենանի դրախօսականը՝ տե՛ս Syria 20 (1939), էջ 81—83:
- 43. La croissant comme emblème national relig. en Turquie. Syria 22 (1941), էջ 66 էւն:
- 44. Մանաներու կողմէ նկարուած կայսերական կենդանազիրներ Թօփթարուի Թանգարանին մէջ. Գիտական Տարեգիրք, Կ. Պ. (Պատր. Կ. Վրդ. Չարգճեան), 1 (1944); էջ 33—36:

Հ. Ա. Ա.

Հ. ՍՐԱՊԻՈՆ ԵՂՎԱՅԵԱՆ՝ Բաղադիտուրիւն: Պէյրուք 1946, 8<sup>0</sup>, էջ 131: Հրատարակուրիւն Միջբարան վարժարանի:

Հայերէն լեզուի հարուստ բառապանծը հայ պատանիներու զիւրաժատչելի ընկույթը մար ձեռնարկութիւն մը մինչեւ այսօր չէ կղած: Որչափ ծանօթ է մեզի, այս ուղղութեամբ Մեծ. Հ. Ս. Եղիայեանի ներկայ զբոյրը առաջին փորձն է հայ գրականութեան մէջ: Իր ընտրած կղանակը նոր է: Հասրտերն եւ աստիճանները բառարանի մը չորութիւնը չունին. անոնց կեանք տուած է Հ. Եղիայեան, որ հեշտիւ տպաւորուին պատանիներու մատղաշ յիշողութեան մէջ: Մեծ. Հեղինակը խօսակցական ձեւի մէջ կը մօտենայ հայորդւոյն: Ստէպ հարցումներ կ'ուղղէ իրրեւ մտերիմ ուսուչից՝ կը բացատրէ աչակերտներուն բառերու արմատը: Անոնց ստջեւ կը դնէ անանցուած բարդ բառեր. կը մեկնէ անոնց կիրառութեան պատշաճ տեղն ու ժամանակը. կու տայ հոմանիշներ եւ հակահիշներ: Հաճելի խօսակցութիւն մըն է ամբողջը, սրամտութեամբ եւ զուէշտով համեմուած յաճախ, միշտ նկրտելով զուարթ եւ հետաքրքիր պահելու իր զիրքն ընթերցող աչակերտութիւնը:

Վստահ ենք, թէ հայ պատանին ուրախութեամբ ձեռքը պիտի առնէ այս մատենանը լավելու դայն՝ ուշադրաւ վէպի մը նման: Ամէն էջի վրայ հայորդին մեծ թուով ընտիր բառերու, ասումներու եւ ոճարանութեան պիտի ծանօթանայ: Բնականաբար ներկայ համեա զբոյրի մէջ Մեծ. Հեղինակը չէր կրնար — խճողուած ձեւի մէջ իսկ, հայ լեզուի ամբողջ բառամթերքը ներկայացնել. եւ հարկ ալ չկար: Հայ պատանին իր մտտայ հասակին պէտք ալ չունի լեզուի գանձարանին միանգամէն տիրանալու: Իր մտքի զարգացումին հետ ինքնարեբարար խերամուտ պիտի ըլլայ ան կարեւորներուն:

Թէպէտ պատանիներու ուղղուած է, այնուհանդերձ մատենան գոհացում կարող է տալ ամէն հասակի եւ ճաշակի: Հոն՝ այդ զրուածքին մէջ, կայ բազմաթիւ ուսանելի անդրադարձութիւններ, իմաստի ճշգրտումներ, հայ լեզուի թանկագին գանձարանէն սակեղինիկ հատիկներ:

Հեղինակը բաժնած է նիւթը երկու մասի եւ ստորագաս զլուիններու: Ա. մասը (էջ 5—53) նուիրուած է մարդու մարմնոյն (զլուխ, վիզ, բազուկ-թեւ, ձեռք-մատ, իրան): Եր-

կրորդ մասին մէջ (էջ 54—103) կը խօսուի հողւոյն, անոր կարողութիւններուն եւ վիճակներուն վրայ (հողի, միտք, իմացականութիւն, բանականութիւն, ճանաչողութիւն, խելք, դատողութիւն, դիտողութիւն, տրամարանութիւն): Ապա «զգացում»ի եւ «զգածում»ի տարբերութիւնը կը շեշտուի (էջ 104—105), որուն կը յաջորդեն վերջին երկու ճոխ գլուխներ՝ «Անհատական զգացումներ» (էջ 106—118) եւ «Ընկերային զգացումներ» (էջ 118—129):

Յանկալի էր, որ Հեղինակը նկատի առնէր կեանքի այլ պարագաներ եւ վիճակներ եւս:

Կասկած չի վերցնել թէ ներկայ «Բառագիտութիւն»ի նման մատենաներ միայն կարող են հայ պատանւոյն եւ երիտասարդ զրոյներու բառամթերքը ընդլայնել, եւ առաջնորդել դանոնք արտայայտուելու հայ մաքուր եւ նրբաճաշակ, պերճ եւ վայելուչ լեզուով մը:

Հ. Ս. Եղիայեանի ոճով գրութիւններ մեծապէս պիտի նպաստեն որ աշխարհարար լեզուն զիմէ իր դասական կատարելութեան:

Հ. Ա. Ա.

### Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ուղարկուած յօճագրութեանս):

- Աքմախեան Մ., Լը Շըվալիէ Տէրէշէնո, Տրամ 3 Արար. Փարիզ 1939, 8<sup>0</sup>, էջ 68 [Ազատ Երկերու Մատենաշար Թ. 1]:
- Անարոնեան Ա., Ժողովածու Երկերի Գ. Հար., Իտալիայում. Իտալական հաքիչներ: Բոստըն, տպ. Հայրենիք, 1946, 8<sup>0</sup> մեծ, էջ 425:
- Իմ բանգը եւ Երանդերիս աշխարհը: Պոսթըն, տպ. Հայրենիք, 8<sup>0</sup>, էջ 173, Գիմն՝ \$ 1.25:
- Անդրանիկ Մկրտիչ, Ուղին: Աղեքսանդրիա, տպ. Ա. Ստեփանեան, 1947, 8<sup>0</sup>, էջ 64: Գիմն՝ 20 Ե. Ղ. Rue Attaine 26, Alexandria, Egypte.
- Արտասահմանեան Ժամանակակից Հայ Գրողներ (Ժողովածու) կազմեցին եւ խմբագրեցին Հր. Գրիգորեան եւ Եղ. Թովմազեան, Երեւան, Հայ Պետհրատ 1946, 8<sup>0</sup>, էջ 312: Գիմն՝ 10 Թ.:

- Աւետիսեան Եւփիմէ (Անայիս), Այգ ու Վերջալոյս. Քերթուածներ եւ արձակ բանաստեղծութիւններ: Յատաճարան Արշակ Չօպանեանի: Փարիզ, տպ. Արտիստիկ, 1942, 8<sup>0</sup>, էջ ԺԴ + 166:
- Աւագեան Յովհ., Այսպէս ապրեցանք: Նիւ Եորք, 1930, 8<sup>0</sup>, էջ 135: Գիմն՝ \$ 1.—: 331 Fourth Avenue New York, N.Y. USA.
- Գէորգեան Վարդան, Ծովուն Երգը. Պուենոս Այրէս, տպ. Արարատ, 1947, 8<sup>0</sup> մեծ, էջ 190: Գիմն՝ \$ 2.—: El Salvador 4643 Buenos Aires, Argentina.
- Գը Մորգան Ժագ, Հայ Ժողովրդի Պատմութիւնը, իր տարեգրութեանց ամենատոյգ ժամանակներէն մինչեւ մեր օրերը: Ճրանս. Թարգմանեց՝ Սարգիս Երկայնեան: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1947, 8<sup>0</sup> մեծ, էջ 504: